

<https://doi.org/10.59982/18294359-23.14.2-mp-14>

Սոնա Էդուարդի Հայրապետյան

Հայցորդ

ՀԵՀ, Լեզուների ամբիոն

Ամփոփագիր

Սույն հոդվածը ներկայացնում է կանադական գրականության ամենաակնառու և ականավոր հեղինակի՝ Մարգարեթ Աթվուդի ֆեմինիստական հայացքները, որոնք լավագույնս արտահայտված են նրա գրական աշխատանքներում: Ուսումնասիրելով Մ. Աթվուդի գրական ժառանգությունը, կարող ենք փաստել, որ նա համարվում է կանադական գաղանկության առաջին ֆեմինիստ գրողն ու կանանց իրավունքների և հավասարության ջատագովը: Սակայն որպես ֆեմինիստ գրող, նրա առանձնահատկությունը կայանում է նրանում, որ նա իր գրական ստեղծագործություններում, անգամ հեքիաթներում, ներկայացնում է կնոջ ուժեղ ու պայքարող տեսակին: Նրա ստեղծագործություններում տեսնում ենք ավեգորիկ մի շարք կերպարների՝ հեքիաթային և անիրական առարկաներ, կենդանիներ, որոնք սակայն մեծամասամբ խորհրդանշում են կնոջն ու նրա էությունը: Ֆեմինիստական գաղափարախոսությունն ունենալով իր գրական ստեղծագործություններում, կանադացի հեղինակ Մ. Աթվուդն իր պատմվածքներում անդրադառնում է երազներին և դրանց թեմատիկ առանձնահատկություններին, որով հեղինակը միտված է դրանք տեսնել որպես ապագայում իրականացվող տեսլականներ: Նրա գրական ստեղծագործությունները համարվում են կանադական գրականության լավագույն ժառանգություններից, որոնք իրենց խորքային և հիմնարար ազդեցությունն են թողել ոչ միայն կանադական, այլ նաև համաշխարհային գրականության տիրույթում: Ինչպես նաև, հեղինակն առանձնակի ուշադրություն է դարձնում մարդկային փոխհարաբերություններին, որոնց հիմքում նա ցանկանում է տեսնել փոխադարձ հարգանքն ու նվիրվածությունը:

Հիմնաբաներ. ստեղծագործական նորարարություն, անգլալեզու գրականություն, հեքիաթներ, մարդկային փոխհարաբերություններ, մարդու իրավունքների ոտնահարում:

Ներածություն

20-րդ դարի անգլալեզու գրականության ֆանտաստիկ ժանրի մեջ մեծ դերակատարում ունեցավ կանադացի ականավոր ստեղծագործող Մարգարեթ Աթվուդը: Առհասարակ, եթե խոսքը գնում է 20-րդ դարի կանադական գրականության մասին, ապա առաջնահերթորեն տեղին է հիշատակել Մարգարեթ Աթվուդին, ում գրական ջանքերն ու ստեղծագործական նորարարությունները իրենց զգալի նշանակությունն ունեցան կանադական գրականության տիրույթում: Նրա պատմվածքներն ու հեքիաթները լի են ազդեցիկ նկարագրություններով, վառ պատկերայնությամբ և թվացյալ աշխարհների գոյությամբ: Հեղինակի սրամտությունն արտացոլվում է իր ստեղծագործություններում, քանի որ իր առաջ քաշած ֆեմինիստական գաղափարներն արտահայտվում են հենց ստեղծագործություններում: Մարգարեթ Աթվուդին իրավամբ համարում են ժամանակակից անգլալեզու գրականության առավել հայտնի ներկայացուցիչներից մեկը: Նա 16 տարեկան էր, երբ սկսեց իր ստեղծագործական ուղին: Մարգարեթ Աթվուդն այն եզակի հեղինակներից է, ով արժանացել է Բուկերովյան մրցանակին, որը նա ստացել է «Կույր մարդասպան» վեպի համար, ևս չորս անգամ հայտնվել է նույն մրցանակաբաշխության եզրափակչում, ստացել է նաև Արթուր Կլարկի մրցանակը [Atwood, 60]: Ինչպես նաև երկու անգամ ստացել է հայրենի Կանադայի գրական ամենաբարձր մրցանակը՝ Գեներալ-նահանգապետի մրցանակը:

Աթվուդն իր գրական ստեղծագործական քայլերն առաջին անգամ կատարում է 1961 թվականին, երբ ընդունվում է Տորոնտոյի համալսարանի Վիկտորիա քոլեջը, և այստեղ էլ՝ քոլեջի գրական 'Acta Victoriana' ամսագրում սկսում են տպագրել նրա բանաստեղծություններն ու հոդվածները:

Մարգարեթ Աթվուդի ստեղծագործություններում գրեթե միշտ փառաբանվում են բնությունն ու բնական երևույթները, և քննադատվում նյութապաշտ աշխարհը: Հեղինակն իր գրվածքների միջոցով անընդհատ ջանում է հիշեցնել, որ նյութական աշխարհից զատ առավել կարևոր է մարդու հոգեկան աշխարհը:

Աթվուդը ներկայացնում է հրաշալի սիրո և սրտի անսահման ցանկության բնական մի վիճակ, երբ ընթերցողը կարծես զգում է հերոսների սերն ու ցանկությունը, ընթերցողի մոտ առաջանում է հերոսին ճիշտ ուղին հուշելու միտքը: Սա նշանակում է, որ հեղինակին հաջողվել է ընթերցողին ֆանտաստիկ իրականության մեջ ներգրավել: Աթվուդն առավել զարգացնում է ոչ սիրային, այլ առավել իրական և արժարժուն թեմաներ, որոնք առկա են մեր դարում. կանանց բռնություն, մարդու իրավունքների ոտնահարում և տարատեսակ հիվանդությունների տարածում:

Մարգարեթ Աթվուդն իր ստեղծագործություններում շեշտը դնում է հոգեբանական ասպեկտին, որտեղ դիտարկվում են կնոջ հոգեկան ներաշխարհն ու նրա ապրումները: Նա մանրակրկիտ կերպով փորձում է նկարագրել կնոջ յուրաքանչյուր արարք և զգացողություն: 20-րդ դարում կանայք արդեն փորձում էին

իրենց ճիշտ տեղն ու դերը գտնել հասարակության մեջ, ոմանք չվախենալով անգամ խարազանումից:

Մարգարեթ Աթվուդի առաջին վեպը լույս է տեսնում 1969 թվականին, որը կոչվում է «Ուտելի կինը» (“Edible Woman”): Այս վեպում հստակ արտահայտվում են նրա գրական հայացքները, որտեղ նա ցույց է տալիս ժամանակակից կնոջ կյանքի արտաքին կողմերը վերականգնելու ունակությունները: Նրա հերոսուհին կարծես թե զոհի կարգավիճակում է, ով «միջին կին» է իրենից ներկայացնում, իսկ հանրությունը նրան ընկալում է որպես անդեմ առարկա: Այստեղ Աթվուդը վեր է բարձրացնում ընդհանրապես մարդկային փոխհարաբերությունների բնույթը:

Այս ստեղծագործությանն են հաջորդում «Ձեռքբերում» (“Surfacing”) և «Տիկին գուշակ» (“Lady Oracle”) պատմվածքները: 1979 թվականին հրատարակվում է նրա «Կյանքը նախքան տղամարդը» (“Life Before Man”) վեպը, որի համար էլ արժանանում է Կանադայի գլխավոր նահանգապետի մրցանակին: Այս ստեղծագործության մեջ հեղինակն ասես առաջ է քաշում կին և տղամարդ հարաբերությունները, որտեղ տղամարդը կնոջը դնում է ծանր բարոյական խնդիրների առջև:

1985 թվականին հրատարակվում է Աթվուդի «Աղախնի պատմությունը» (“The Handmaid’s Tale”) ստեղծագործությունը, որը իրենից բավականին մոայլ մի պատմություն է ներկայացնում: Այս ստեղծագործությունը դարձել է ժամանակակից գրականության դասական գործերից մեկը: Դժվարանալով դասակարգել էթվուդի ստեղծագործությունների ժանրը՝ այս գիրքը դասվում է ֆանտաստիկայի ժանրին, որը ապագայի պատմություն է, ֆեմինիստական տրակտատ: Այս գրքում նկարագրվում է դաժան, հայրիշխանական թեոկրատիան, որը ստեղծվել է տղամարդկանց կողմից, սակայն նրանց օժանդակել են նաև կանայք: Այս գրքում հեղինակը վեր է հանում կնոջ ու տղամարդու փոխհարաբերությունների բնույթը, քննադատաբար մոտենում այն երևույթին, որ կանայք երբեմն ընկալվում են որպես վերարտադրության մեքենաներ, իսկ նրանց հոգին ու միտքը ոչ ոքի չի հետաքրքրում [Myrsiades, 219]:

Իսկ ինչ է պատմում աղախինը: Գալաադի հաղթանակից հետո ցածր ծնելիության խնդրով մտահոգված կառավարությունը ողջ ուժով ուղղվում է կանանց դեմ: Ստեղծվում են հատուկ կենտրոններ, որտեղ ստրկուհիները պետք է երեխաներ ունենային բարձր խավի՝ կոմանդորների ամուլ կանանց համար: Նրանք, ովքեր անպտուղ են, հայտարարվում են «ոչ կին» և ուղարկվում հատուկ ճամբարներ, որտեղ վերջիններս աշխատում էին թունավոր թափոնների հետ և վաղ մահանում: Այսինքն, աղախին լինելը ամենավատ բանը չէր...

Վեպում նկարագրվում է, թե ինչպես նոր, հրաշալի աշխարհում կանայք իրավունք չունեն սեփականություն ունենալ, աշխատել, սիրել, գրել ու կարդալ: Նրանց թողնված է ընդամենը մարդկային ցեղը շարունակելու գործառույթը, այն էլ նրանք կարող են կատարել միայն այն ժամանակ, երբ իրենց տղամարդը ցանկանա: Սրանով էթվուդը շեշտադրում է կնոջ կախյալ դերը:

Աթվուդի լեզվաոճական առանձնահատկություններից մեկն այն է, որ նա օգտագործում է աստվածաշնչյան լեզուն՝ որպես գրական ստեղծագործության պաշտոնական լեզու: Այլընտրանքային ֆանտաստիկ աշխարհում տեղական ոստիկանությունը հանդիսանում է «հավատի պաշտպանը», զինվորները՝ «հրեշտակները», խանութներն ունեն խորհրդանշական աստվածաշնչյան անվանումներ՝ «Հաց», «Ձուկ»: Այստեղ կարելի է ենթադրել, որ աստվածաշնչյան բառապաշարի կիրառումը քաղաքական խաբեբայությունը մաքրագործելու փորձ է:

Աթվուդի մեկ այլ հայտնի ստեղծագործություններից է «Օրիքսն ու Մարգալորը» (“Oryx and Crake”): Հարկ է նշել, որ հեղինակն այնքան էլ համաձայն չէր գրաքննադատների այն կարծիքին, որ իր այս երկու ստեղծագործությունները ֆանտաստիկայի ժանրին են պատկանում, դա բացատրվում է նրանով, որ դրանցում առկա խնդիրները չափազանց արդիական ու իրական են: Աթվուդն առաջարկել է իր սեփական կարծիքը՝ սպեկուլյատիվ ֆանտաստիկա՝ ընդգծելով, որ «Օրիքսն ու Մարգալորը» ստեղծագործության մեջ չկան միջգալակտիկական թռիչքներ, միջմոլորակային տեղափոխություններ և այլմոլորակայիններ:

Աթվուդի ստեղծագործության հերոսները կանայք են, իսկ թեմաները՝ բավականին տարբեր՝ սկսած կորած հնարավորություններից, չդասավորված հարաբերություններից, անցյալի ուրվականներից մինչև այսօրվա կյանքը, մարդկանց կենցաղն ու նրանց տգիտությունը:

«Օրիքսն ու մարգալորը» ստեղծագործությունը առավել իրատեսական և ֆուտուրիստական բնույթ ունի, քանի որ դրանում է ներկայացվում մեծագույն աղետի եզրին կանգնած մոլորակը, որին սպառնում են ահաբեկչությունը, համաճարակները, գենետիկական մուտացիաներն ու տարատեսակ վերափոխումները: Մի խենթ գիտնական և աճպապար անհաջողակ սպառողական անհեթեթության պատճառով աշխարհը վերածում է ամայի անապատի: Մարդկությանը ոչնչացնելու համար բավական է ընդամենը մեկ մշակված բացիլ և մի քանի ամսվա համաճարակը պատրաստ է: Սակայն մարդկանց փոխարեն ծնվում է մի նոր մուտացիայի ենթարկված ցեղ՝ խոտակերների, անմեղ ու միամիտ էակներից բաղկացած: Լքված մի այգում ապրում են այդ խելահեղ Մարգալորի երեխաները, իսկ աշխարհում կենդանի մնացած միակ մարդը՝ խենթ գիտնականը, նրանց համար նոր հեքիաթ է հնարում: Սա այն ստեղծագործություններից է, որը տարբերվում է իր սյուժետային և ժանրային առանձնահատկություններով, քանի որ այստեղ հեքիաթը կերտվում է հենց հեքիաթի մեջ:

Այս գիրքը մարդկությանը մտածելու տեղիք է տալիս այն մասին, որ բազմաթիվ արատավոր գործոններ դեռևս սպառնալու են մոլորակին, սակայն ստեղծագործության վերջը բավականին լավատեսական է, ըստ որի համաշխարհային աղետից հետո աշխարհը դառնում է ավելի բարի և մաքուր: Առհասարակ Աթվուդի գրական ստեղծագործություններում մեծ տեղ են հատկացվում աստվածաշնչյան գաղափարներին, որոնք կարծես թե ամենուր են: Այս գրքի վերջաբանը նույնպես

աստվածաշնչյան մաքրագործման գաղափարն ունի իր մեջ. երբ Նոյը դուրս եկավ իր տապանից և իջավ լեռան ստորոտին, մարդկությունը ոչնչացել էր, բացի իր ընտանիքից, որը աշխարհին պիտի ներկայանար որպես նոր, մաքուր և աստվածավախ կերպարով: Էթվուդի այս ստեղծագործությունը կրում է կրոնափիլիսոփայական յուրահատկություն, քանի որ ծնվում են մշակված, սարքավորումներով աճեցված երեխաներ՝ Մարգալորի երեխաները: Այս պատմությունը նաև մենակության, օտարացման և մոռացված մարդկային արժեքների մասին պատում է:

Այստեղ մարգալորի դիրքորոշումը ակնհայտ նիհիլիստական է, քանի որ ավելի քան իրական է նրա՝ գոյություն ունեցող ամեն բան ոչնչացնելու մոլուցքը: Սակայն կարծես թե նրա այս մոլուցքն արդարացվում է նրա այն մղումով, որ ցանկանում է ստեղծել նորը, շտկել բոլոր արատավոր ծրագրերը: Այս ձգտման մեջ նա միայնակ է, չնայած որ ինքը չի գիտակցում իր միայնությունը, բայց այն կործանում է բոլորին, անգամ աղջկան՝ Օրիքսին, ով կարող էր շտկել իրավիճակը՝ հավերժական ապատիայի վիճակից դուրս բերելով Ձիմմին և Մարգալորին հետ պահելով ինքնաոչնչացումից:

Առհասարակ, Մարգարեթ Աթվուդի ստեղծագործություններում առկա են աստվածաշնչյան մոտիվներ և դետալներ: Նրա յուրաքանչյուր հեքիաթ ու պատում ստեղծված է հենց աստվածաշնչյան առասպելաբանության հիման վրա: Նշենք մի քանի օրինակներ, Աթվուդի «Աղախնի պատմությունը» հեքիաթում հերոսուհին 33 տարեկան է, որը նույնպես ունի խորհրդանշական դերը՝ նա Հիսուսի տարիքին է, երբ կրում է լռակյաց ու մենակյաց կնոջ տառապանքները: Նա զրկված է խոսելու և հասկացվելու իրավունքից: Մեկ այլ հեքիաթում՝ «Օրիքսն ու մարգալորը» գրքում, հեղինակը մեծ հույս է հայտնում, որ աշխարհի կործանումից և աղետալի վերջից հետո, երկիրը նորից վերածնվելու է մաքուր սիրով և առհասարակ լցվելու է մաքուր արարքներով: Այս օրինակներն այնպիսի արքետիպիկ մոդելներ են, որոնք կոդավորված են մարդու ուղեղում և արտահայտվում են նման կերպ՝ ցույց տալով յուրաքանչյուր մարդու ենթագիտակցական մակարդակում առկա սկիզբը:

Մարգարեթ Աթվուդը ձգտում է իրականից անցում կատարել դեպի միջ: Նա նաև փորձում է վեր հանել ստրկատիրական միջի տեսակը, քանի որ իր «Աղախնի պատմությունը» հեքիաթում նկարագրվում է ստրկատիրական կարգերը, որոնք առկա են քսաներորդ դարում, բայց որոնք արդեն արքայի են հասնում:

1960-1970-ական թվականներից սկսած հետպատերազմյան տնտեսական, մշակութային և քաղաքական պայմաններն իրենց արտահայտումն են ստանում կանադական գրականության մեջ: Բրիտանիայի և Ամերիկայի տնտեսական սերտ կապերը հանգեցնում են նրան, որ կանադական գրականության մեջ ներմուծվում են ոչ միայն անգլիական, այլ նաև ամերիկյան իրողություններ: Ընդլայնվում է սոցիալական կյանքի պատկերման առարկան, որին նպաստում է մեքենաների և հեռուստատեսության հասանելիությունը, էլեկտրական տեխնիկայի զարգացումը, համացանցի առաջացումը, կրթության հնարավորությունների մեծացումը, տիեզերքի նվաճումը, արհեստական ինտելեկտի ուսումնասիրությունները և այլն:

Ընդվզումը ինքնաարտահայտման և ինքնահաստատման գործողություն է: Միգուցե հենց այս ընդվզմանն են ձգտում նաև կանադացի հեղինակները, որոնց համար բավականին կարևոր է ազգային դրսևորման էկզիստենցիալ հարցերը: Նրանք ջանում են գտնել իրենց և իրենց հայրենակիցներին Ամերիկայի հոծ բազմության և բազմադեմ հասարակության մեջ:

Կնոջ տարաբնույթ կերպարների առեղծվածային դրսևորումների և ազատատենչ գաղափարների ուսումնասիրությունը մշտապես եղել են գրականագիտական և մշակութաբանական լուրջ քննարկումների կիզակետում: Սակայն, այս ուսումնասիրությունները իրենց առավել հասուն և լուրջ եզրահանգումներին հասան ֆեմինիստական շարժման առաջացմանը զուգահեռ:

Յուրաքանչյուր դար իր տարբեր գրական արտահայտումներով և ժանրերով ունեցել է իրեն հատուկ կանացի ֆեմինիստական դրսևորումը [Hooks, 121]: Սակայն այն, ինչ միավորում է այս բոլոր դարերի շրթայական հեռավորությանը, պայքարն է հանուն կանացի այնպիսի խնդիրների բարձրաձայնման, ինչպիսիք են արժանապատվությունը, ինքնասիրությունը, անհատականությունը և ինքնաիրագործումը: Ըստ էության, ֆեմինիստական շարժման հստակ ծագումն ու վայրն այնքան էլ պարզ ու հստակ չէ, քանի որ յուրաքանչյուր դարաշրջանում կարելի է գտնել ֆեմինիստական աղերսներ և վաղ դրսևորումներ: Մասնավորապես, գիտական աշխատություններում, որոնք ուսումնասիրում են կանացի նամակները, գրվածքներն ու մտորումները, պարզորոշ է դառնում այն հանգամանքը, որ կանայք դեռևս վաղ Միջնադարում հեռու են մնացել գրականությունից, կամ ավելի ճիշտ նրանք փորձել են բացառել գրականություն մուտք գործելուց: Գերմանացի մշակութաբան Անյե Մալդեր Բեյքերն իր «Տեսնելն ու իմանալը. կանայք և իմացությունը Եվրոպայում Միջին Դարերում, 1200-1500-ականներին» ապացուցում է այն հանգամանքը, որ կանանց մեծամասնությունը այդ ժամանակաշրջանում ապրում էր մեկ այլ աշխարհում, որը բավականին հեռու էր կրթությունից և իմացությունից: Եվ նրանք ականայից այլ կերպ էին ընկալում այս կամ այն մշակույթն ու գիտելիքը: Անգամ համալսարաններն ու դպրոցները փորձում էին աղջիկներին և կանանց զերծ պահել տեսնելու և լսելու իմացական աշխարհից [Mulder-Bakker, 142]:

Ֆեմինիզմը լայն իմաստով հասարակական շարժում է, որի կողմնակիցները գտնում են, որ կանայք պետք է տղամարդկանց հետ հավասար լինեն կյանքի բոլոր ոլորտներում, իսկ նեղ իմաստով՝ սոցիալ-փիլիսոփայական շարժում, որի նպատակն է վերջ դնել կանանց շահագործմանը և նրանց համար տղամարդկանց հետ հավասար իրավունքներ ապահովել: Ֆեմինիստական շարժման հիմնական նպատակն է՝ իգական սեռի ներկայացուցչի բևեռացումը որպես լիակատար անձ, ով ունակ է հոգալու իր մասին կյանքի բոլոր ասպեկտներում:

Սակայն ֆեմինիզմի կողմնակիցները պայքարում են ոչ միայն կանանց իրավունքների պաշտպանության համար, այլ նաև տղամարդկանց և ցանկացած մարդու իրավունքների և ազատությունների ապահովման և իրականացման

գաղափարների համար: Ֆեմինիստական գաղափարները առավել շատ հանդես են գալիս որպես սոցիալ-մշակութային զարգացման այլընտրանքային փիլիսոփայական կոնցեպցիա: Երկար ժամանակ այն գոյություն է ունեցել որպես կանանց և տղամարդկանց հավասարության և հավասար իրավունքներ ունենալու գաղափարախոսություն և որպես սոցիալ-քաղաքական ուղղություն: Եվ հենվելով կնոջ՝ գործանականում արտահայտվող սոցիալական կարգավիճակի վրա, ֆեմինիզմի տեսաբանները ձևակերպեցին իրենց դժգոհությունը աշխատանքային իրավունքի իրական դրության հանդեպ: Ֆեմինիզմի ներակայացուցիչները ձգտում են կանաց և բոլոր մարդկանց էմանսիպացիային: Էմանսիպացիան (լատ. *emancipatio*) հին հռոմեացիաների մոտ նշանակում էր հայրական իշխանությունից ազատագրվելը: Այստեղից էլ առաջ է եկել այս տերմինի ընդհանուր նշանակությունը՝ ազատագրում կախվածությունից և սահմանափակումից:

Անգլիացի մշակութաբան Ռեբեկա Քրեգը, մասնավորապես, ուսումնասիրել է 15-րդ դարի մի օրինակ Մարգարեթ Փեսթոնի նամակագրական արվեստի վերաբերյալ, որը փաստում է այն հանգամանքը, որ սեփական լուսավորչական մտքի շնորհիվ, Մարգարեթը փոխում է իր սոցիալական պատկերացումները գրական համատեքստում և հետևելով առօրյա կյանքի պահանջներին, աշխատում է ձեռք բերել գրական հմտություններ և հետաքրքրություններ: Այս գրական փորձերը, իհարկե, լավ անդրադարձ են ունենում Մարգարեթի մտահորիզոնի և աշխարհայացքի վրա, ինչպես նաև օգնում են նրան ունենալ որոշակի դիրք իր ամուսնու գործերում: Նրա գրաճանաչությունն ու սեփական մտքի հստակ արտահայտումը դարձնում են նրան իր ամուսնու աջակիցը, ով գրի է առնում նրանց կենցաղային և առևտրային ողջ գործունեությունը, ինչպես նաև նամակագրությունը բոլոր ոլորտներում: Իհարկե, այս պարագայում Մարգարեթը պատասխանատու չէր ամուսնու կողմից թելադրվող նամակների բովանդակության համար, սակայն նա արդեն ուներ իր արժանապատիվ դերն ու նշանակությունը ամուսնու և հասարակության աչքերում: Այս նամակագրական ոլորտում Մարգարեթը և բոլոր այն կանայք, ովքեր գրում էին, կարողանում էին արտահայտել իրենց սեփական կարծիքները, հակադրություններն ու անգամ դժգոհությունները, որոնք էլ առաջ էին մղում նրանց ստանձնելու նաև առաջնորդողի դերը: [Krug, 29]

Ըստ անգլիացի գրականագետ Ռիչարդսոնի՝ մեկ այլ նշանակալի ուսումնասիրության արդյունքում, պարզ է դառնում, որ 15-րդ դարում անգլուհի Էլիզաբեթ Սթոների կողմից գրված նամականիները արդեն իսկ այդ դարաշրջանում որոշակի ոճ և հստակություն էին թելադրում հասարակությանը: Ըստ Ռիչարդսոնի՝ հենց նրա նամակներն են, որ հռետորական մարտահրավերներ են նետել իր ժամանակակիցներին, ինչպես նաև որպես արդյունք, նա կարծես թե հիմք է դրել էպիստոլյալ գրականությանը [Richardson, 57]: Նման մշակութաբանական և գրականագիտական ուսումնասիրությունները հստակ մատնանշում են կնոջ դերն ու նշանակությունը թե՛ գրականության մեջ, թե՛ առօրյա կյանքում: Պետք է հավելենք

նաև, որ գրական գործունեության և իմացության դաշտ մուտք գործելուն զուգահեռ, Միջնադարյան Անգլիայում գրաճանաչ և կիրթ կանայք իրենց մեջ մի տեսակ ուժ էին գտել և փորձում էին փոխանցել այդ ուժը նաև իրենց կողքի թույլ կանանց: Եթե ոչ գրական տեքստերի միջոցով, ապա բանավոր կերպով նրանք փորձում էին մյուս կանանց քաջալերել և տեղեկացնել, որ կարող են բարձրաձայն արտահայտել սեփական մտայնությունների և մտահոգությունների վերաբերյալ: Կարևոր է նաև նշել հետևյալ փաստը, որ հատկապես Անգլիայում և Ֆրանսիայում էին կանայք առավել ոգևորված և հավատով պայքարում հանուն սեփական երազանքների, ցանկությունների և պատկերացումների իրագործման:

Հետաքրքիր համեմատական կարելի է անցկացնել Մարգարեթ Աթվուդի «Աղախնի պատմությունը» պատմվածքի և դեռևս նոր ծիլ տվող օրագրային ժանրի ֆեմինիստական ստեղծագործությունների հետ, քանի որ հեղինակը՝ Աթվուդը միտված է ներկայացնելու ֆեմինիստական նոր դրսևորվող ժամանակաշրջանն ու դրանում առկա որոշ խնդիրները: Այս ամենի արդյունքում ձևավորվում է օրագրային, խոստովանական մի յուրօրինակ ակնարկ, որը կարծես թե իր մեջ է առնում ֆեմինիստական գաղափարախոսության գրեթե բոլոր դարերում առկա արծարծվող խնդիրները:

Կին գրողներն առաջ եկան գտնելու կնոջ իսկական տեղն ու դերը, դնելու կնոջ և տղամարդու իրավահավասարության հարցը, ապացուցելու, որ կինն ընդունակ է ստեղծագործելու ոչ պակաս գեղեցիկ և խելացի, քան տղամարդը: Տղամարդկանց մեծ մասի ավելի 'խելացիությունը' արդյունք է շփման, փորձառության ու ինֆորմացված լինելու առավելության, և երբ կանայք հաղթահարում են այդ բացը, դառնում են ոչ պակաս խելացի ու ճկուն:

Ժորժ Սանդը, որի անվան հետ է կապված «կանացի վեպի» զարգացումը, իր ստեղծագործության հիմքում դնում է մարդու, մասնավորապես կնոջ՝ հասարակության մեջ ունեցած տեղի մասին խորհրդածությունները [Klages, 45]:

Անգլոամերիկյան գրականության քննադատներ Փիթեր Շերլոկը, Ջեյն Սթիվենսոնը և Մարի-Լուիս Քուլահենը, իրենց ուսումնասիրություններում մի քանի ձևեր են բացահայտել, ըստ որոնց կանայք արտահայտել են իրենց ազատ գաղափարներն ու մտայնությունները: Այս դրսևորումների արդյունքում նրանք հասել են «համբավի կառավարման», այսինքն առավել հարգանք և պատիվ են ձեռք բերել հասարակության մեջ ի շնորհիվ իմացական դաշտի: Հատկապես այն պարագայում, երբ տղամարդիկ առավել սովոր էին հնազանդ, կամք չարտահայտող և թույլ իգական սեռի ներկայացուցիչների, ընթերցասեր և գրագետ կանայք կարողացան կոտրել որոշակի կարծրատիպերն ու դառնալ գնահատանքի առարկա:

Մարգարեթ Աթվուդի պարագայում, կանացի կերպարները ներկայացվում են ոչ թե զոհեր, ովքեր անցնում են որոշակի դժվարությունների և խոչընդոտների ճանապարհով, այլ նրանք պատկերված են որպես անձինք, ովքեր կարողանում են հաղթահարել բոլոր բարդություններն ու հպարտորեն առաջ են շարժվում: Զոհի

կարգավիճակը պատվաբեր չէ ֆեմինիստական հայեցակարգերից, այդ իսկ պատճառով էլ Մ.Աթվուղը ջանում է հնարավորինս բարձր և վեհ ներկայացնել կնոջ այն գոյությունը, որը դեռևս մինչև 20-րդ դարը պարփակված էր, ներամփոփված և չուներ որոշակի արժեքների բարձրաձայնում: Հետևաբար, Աթվուղը կանադական գրականության համաձիրում դարձավ կանացի այն բարձր ձայնը, որը առաջ էր քաշում կանացի բոլոր տառապանքներն ու զգացողությունները ոչ թե որպես նրանց թուլացնող, այլ որպես՝ ուժեղացնող և ինքնակերտող միջոց:

Եզրակացություն

Քննելով և ուսումնասիրելով 20-րդ դարի կանադացի հեղինակ Մարգարեթ Աթվուղի ստեղծագործությունները՝ կարող ենք եզրահանգել, որ նրա բոլոր գրական երկերում բացարձակապես կարևորվում են մարդկային հավասար և հարգալից հարաբերությունները հասարակության մեջ: Ինչպես նաև իր աշխատանքներում հեղինակը պատկերում է ստրկության մեջ ապրող, սակայն ազատ ոգի և մտածողություն ունեցող կնոջ՝ դրանով իսկ վեր հանելով կանացի ուժեղ և համարձակ տեսակին:

Գրականության ցանկ

1. Cooke N. Margaret Atwood: A Biography: Toronto: ECW; 1980, 378 P.
2. Hooks, Bell: Feminism is for Everybody Passionate Politics: 2000: New York, 130 P.
3. Klages Mary: Postmodernism: English 2010: Modern Critical Thought: University of Colorado: 2003, 314 P.
4. Mulder-Bakker: Seeing and knowing: Women and learning in Medieval Europe: 1200-1500: Brepols: 2004, 204 P.
5. Myrsiades, Linda: Law, Medicine and the Sex Slave in Margaret Atwood's "The handmaid's Tale": 1999: New York, 390 P.
6. Rebecca Krug: Women's Literate Practice in late Medieval England: Cornell University Press, 2002, 225 P.
7. Ricahrdson: The Achievement of Scholarly Authority for Women: University of Pennsylvania Press, 2005, 640 P.